ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ

ՄԻՋԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) և Հյուսիսային շրջակա միջավայրի ֆինանսական կորպորացիան (այսուհետ՝ ՀՇՄՖԿ), այսուհետ՝ միասին Կողմեր,

հաշվի առնելով, որ ՀՇՄՖԿ-ն հիմնադրվել է 1990 թվականին՝ որպես միջազգային ֆինանսական հաստատություն, և որ նա գործում է Դանիայի, Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Նորվեգիայի և Շվեդիայի կառավարությունների միջև 1998 թվականի նոյեմբերի 6-ին կնքված՝ Հյուսիսային շրջակա միջավայրի ֆինանսական կորպորացիայի վերաբերյալ համաձայնագրի շրջանակներում,

նկատի ունենալով, որ ՀՇՄՖԿ մանդատը Հյուսիսային Եվրոպայի համար բնապահպանական տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող ներդրումների խթանումն է Արևելյան Եվրոպայում՝ այդ երկրներում ներդրումների ֆինանսավորմանը նպաստելու միջոցով,

ցանկանալով Կառավարության և ՀՇՄՖԿ պայմանավորվող պետությունների համար հետաքրքրություն ներկայացնող ներդրումների համար ՀՇՄՖԿ կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների օգտագործման հարցում երկարաժամկետ համագործակցության համար հիմք ստեղծել,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Համագործակցության սկզբունքները

Բաժին 1.01 Կառավարությունը և Հայաստանի Հանրապետությունում ցանկացած պետական կամ մասնավոր իրավաբանական անձ իրավասու են ստանալու ՀՇՄՖԿ կողմից դրա հիմնադիր փաստաթղթերի և սույն Համաձայնագրի համաձայն տրամադրվող ֆինանսավորում: Ֆինանսավորման միջոցները կարող են օգտագործվել ընտրված ներդրումների շրջանակներում ծախսերի ցանկացած հոդվածի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

Բաժին 1.02 ՀՇՄՖԿ-ից ֆինանսավորումն առաջարկվում է ՀՇՄՖԿ կողմից տրամադրված ներդրումների, փոխառությունների և երաշխիքների հավասար պայմաններով՝ առաջնահերթություն տալով այն ներդրումներին, որոնք ուղղված են շրջակա միջավայրի բարելավմանը:

Բաժին 1.03 ՀՇՄՖԿ կողմից ֆինանսավորմամբ համալրվում են առկա մյուս ֆինանսական աղբյուրները: ՀՇՄՖԿ-ն կաջակցի համապատասխան ներդրումների շահավետ ֆինանսավորման կազմակերպմանը այլ միջազգային ֆինանսական հաստատությունների, իր պայմանավորվող պետությունների պետական ու մասնավոր ֆինանսական հաստատությունների և այլ ընտրված հաստատությունների հետ համաֆինանսավորման միջոցով:

Բաժին 1.04 Կողմերը պարբերաբար կքննարկեն և տեսակետներ կփոխանակեն Հայաստանի Հանրապետությունում ՀՇՄՖԿ-ի նպատակների, ներդրումներ կատարելու չափանիշների և գործունեության վերաբերյալ:

Բաժին 1.05 Սույն Համաձայնագիրը սահմանում է Կառավարության և ՀՇՄՖԿ միջև համագործակցության ընդհանուր շրջանակը: ՀՇՄՖԿ կողմից ֆինանսավորվելիք կոնկրետ ծրագրերի հատուկ դրույթներն ու պայմանները կսահմանվեն ՀՇՄՖԿ կողմից՝ յուրաքանչյուր առանձին ֆինանսավորման համաձայնագրում:

Հոդված 2
ՀՇՄՖԿ-ի, իր ներկայացուցիչների և ակտիվների կարգավիճակը

Բաժին 2.01 Կառավարությունն ընդունում է, որ ՀՇՄՖԿ-ն միջազգային ֆինանսական հաստատություն է, որը գնումների թափանցիկության, ներդրումների կատարման ընթացքում արդյունավետ կառավարման և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության ու ազգային պարտքի վերաձևակերպմանը չմասնակցելու առումով վարում է այլ միջազգային ֆինանսական հաստատություններին համանման քաղաքականություն:

Բաժին 2.02 Հայաստանի Հանրապետության տարածքում իր գործունեության առնչությամբ ՀՇՄՖԿ-ն օգտվում է միջազգային համաձայնագրերով միջազգային կազմակերպություններին տրված անձեռնմխելիությունից:

Բաժին 2.03 ՀՇՄՖԿ-ն Հայաստանի Հանրապետության տարածքում պետական հատվածին ֆինանսավորում տրամադրելիս կազատվի մրցակցային եղանակով իրականացվող գնումների գործընթացից: ՀՇՄՖԿ-ից, ՀՇՄՖԿ ցանկացած համաֆինանսավորողից ֆինանսավորում ստացող կազմակերպությունները այդ ֆինանսավորման միջոցով ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք

բերելիս կկիրառեն ՀՇՄՖԿ գնումների ուղեցույցներն ու կանոնները, եթե այլ բան համաձայնեցված չէ ՀՇՄՖԿ կողմից:

Բաժին 2.04 ՀՇՄՖԿ-ն միջազգային իրավաբանական անձ է և Հայաստանի Հանրապետությունում օգտվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով իրավաբանական անձանց տրամադրվող ամենածավալուն իրավունակությունից: ՀՇՄՖԿ-ն Հայաստանի Հանրապետությունում մասնավորապես կարող է.

- ձեռք բերել և օտարել շարժական և անշարժ գույք,
- լինել դատավարության կողմ, և
- ներգրավել ֆինանսական միջոցներ:

Բաժին 2.05 ՀՇՄՖԿ-ն Հայաստանի Հանրապետության տարածքում օժտված է անձեռնմխելիությամբ իրավազորությունից: Ինչպես սահմանված է ՀՇՄՖԿ հիմնադիր փաստաթղթերում, ՀՇՄՖԿ-ի դեմ հայց կարող է ներկայացվել միայն այն երկրի տարածքում գտնվող իրավասու դատարանում, որտեղ ՀՇՄՖԿ-ն ունի գրասենյակ կամ նշանակել է գործակալ՝ դատավարության մասին ծանուցում ստանալու նպատակով, կամ երբ ՀՇՄՖԿ-ն այլ ձևով հստակ ընդունել է իրավազորությունը:

Բաժին 2.06 ՀՇՄՖԿ Տնօրենների խորհրդի բոլոր անդամներին, նրանց տեղակալներին, գլխավոր տնօրենին, ՀՇՄՖԿ պաշտոնատար անձանց ու մյուս աշխատողներին և ՀՇՄՖԿ կողմից նշանակված փորձագետներին (այսուհետև յուրաքանչյուրը՝ ներկայացուցիչ), անկախ քաղաքացիությունից, շնորհվում է անձեռնմխելիություն՝ իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում բանավոր կամ գրավոր խոսքի և իրականացրած բոլոր գործողությունների հետ կապված իրավական գործընթացների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՇՄՖԿ-ն հրաժարվում է այդ անձեռնմխելիությունից, ինչպես նաև օգտվում են իրենց բոլոր պաշտոնական և այլ փաստաթղթերի անձեռնմխելիությունից:

Այնուամենայնիվ, այդ անձեռնմխելիությունը չի կիրառվում ցանկացած այդպիսի ներկայացուցչի պատճառով տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարներից առաջացող վնասի դեպքում քաղաքացիական պատասխանատվության նկատմամբ: ՀՇՄՖԿ ներկայացուցիչներին տրամադրվում է ճամփորդական այնպիսի արտոնություններ, ինչպիսիք Կառավարության կողմից տրամադրվում են Հայաստանի Հանրապետության տարածքում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Բաժին 2.07 Ի լրումն վերոնշյալ 2.06-րդ բաժնում նշվածի՝ ՀՇՄՖԿ ծառայողներն ու այլ աշխատողները, ներառյալ ՀՇՄՖԿ կողմից նշանակված փորձագետները և ՀՇՄՖԿ համար առաքելություն կատարողները, Հայաստանի Հանրապետությունում և վերջինիս առնչությամբ օգտվում են հետևյալ արտոնություններից և անձեռնմխելիությունից.

ա) ՀՇՄՖԿ ծառայողներն ու աշխատողները, բացառությամբ տեղական անձնակազմի, ազատվում են ՀՇՄՖԿ կողմից վճարվող աշխատավարձի կամ այլ վարձատրությունների հարկերի վճարումից:

բ) Արժութային սահմանափակումների առնչությամբ ՀՇՄՖԿ ծառայողների և աշխատողների ազատումը ոչ պակաս նպաստավոր է, քան դիվանագիտական ներկայացուցչությունների համեմատելի աստիճան ունեցող ծառայողներին շնորհված ազատումը:

գ) ՀՇՄՖԿ ծառայողները և աշխատողները Հայաստանի Հանրապետությունում միայն առաջին անգամ նշանակվելու դեպքում ազատվում են շարժական և անձնական օգտագործման գույքի մասով ներմուծման հարկերից և այլ պարտավորություններից:

Հոդված 3
Ֆինանսական միջոցների ներգրավումը

Բաժին 3.01 ՀՇՄՖԿ-ն կարող է ներգրավել Հայաստանի Հանրապետության արժույթով արտահայտված ֆինանսական միջոցներ՝ թողարկելով պարտատոմսեր, մուրհակներ կամ ցանկացած այլ ֆինանսական գործիքներ՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում բաց կամ փակ տեղաբաշխման նպատակով:

Բաժին 3.02 Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտ անհատներից և/կամ իրավաբանական անձանցից ավանդների ներգրավման միջոցով ֆինանսական միջոցների ներգրավումը կպահանջի բանկային գործունեության լիցենզիա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

Բաժին 3.03 Հայաստանի Հանրապետությունում ՀՇՄՖԿ կողմից թողարկվող ֆինանսական գործիքների համար Կառավարության մարմինների կողմից հատուկ հաստատում պահանջող ներդրումների կամ գործարքների առումով ապահովվում է մյուս միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից թողարկվող ֆինանսական գործիքների համար ապահովվող առավել բարենպաստ ռեժիմին համանման ռեժիմ:

Հոդված 4
Հարկերը և տուրքերը

Բաժին 4.01 Կառավարությունը շնորհում է սույն Համաձայնագրի շրջանակում ՀՇՄՖԿ կողմից ֆինանսավորվող պետական հատվածի դրամաշնորհային ծրագրերի իրականացման ընթացքում առաջացող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման պարտավորության ազատում:

Բաժին 4.02 ՀՇՄՖԿ կողմից թողարկված ֆինանսական գործիքների ձեռքբերման և տիրապետման համար Հայաստանի Հանրապետությունում հարկման առումով՝ եկամտի, կապիտալի աճի առնչությամբ կամ այլ տեսակի, ապահովվում է մյուս միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից թողարկվող ֆինանսական գործիքների համար ապահովվող առավել բարենպաստ ռեժիմին համանման ռեժիմ:

Բաժին 4.03 Հայաստանի Հանրապետությունում այն կազմակերպությունները, որոնք ՀՇՄՖԿ կողմից ֆինանսավորում են ստանում, կամ որոնցում ՀՇՄՖԿ-ն ունի գրավի իրավունք, ազատվում են ՀՇՄՖԿ-ին կատարվող վճարումների նկատմամբ հարկեր պահելու ցանկացած պարտավորությունից:

Հոդված 5
Վճարման սահմանափակումները
Արժույթի փոխանցումը

Բաժին 5.01 ՀՇՄՖԿ-ն ազատվում է վճարման սահմանափակումներից և ընթացիկ ու կապիտալ հաշիվների սահմանափակումներից, որոնք որևէ կերպ կանխում կամ

խոչընդոտում են իր հանձնառությունների կատարմանը կամ ֆինանսավորման գործունեությանը:

Բաժին 5.02 ՀՇՄՖԿ-ի համար պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետությունում իր կողմից իրականացված գործառնությունների հետ կապված արտարժույթ գնելու, փոխանցելու և ծագման երկիր վերադարձնելու ազատ հնարավորություն:

Բաժին 5.03 Հայաստանի Հանրապետությունում գործող այն կազմակերպությունների համար, որոնք ՀՇՄՖԿ կողմից ֆինանսավորում են ստանում, կամ որոնցում ՀՇՄՖԿ-ն ունի գրավի իրավունք, պետք է ապահովվի տոկոսի, մայր գումարի վճարման և ՀՇՄՖԿ նկատմամբ այլ ֆինանսական պարտավորությունների կատարման նպատակով արտարժույթ գնելու և փոխանցելու ազատ հնարավորություն:

Հոդված 6
Ներդրումների պաշտպանությունը

Բաժին 6.01 Այն կազմակերպությունները, որոնք ՀՇՄՖԿ կողմից ֆինանսավորում են ստանում, կամ որոնցում ՀՇՄՖԿ-ն ունի գրավի իրավունք, կամ որոնք ներդրումներ են կատարել ՀՇՄՖԿ կողմից թողարկված ֆինանսական գործիքներում, Հայաստանի Հանրապետության տարածքում օգտվում են ոչ պակաս բարենպաստ ռեժիմից, քան այն ռեժիմն է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և ներդրումների փոխադարձ խթանման ու պաշտպանության վերաբերյալ ցանկացած երկկողմ համաձայնագրով, որի կողմ է Կառավարությունը:

Բաժին 6.02 Կառավարությունն ապահովում է ՀՇՄՖԿ կողմից ֆինանսավորվող ներդրումների նպատակային օգտագործումը:

Հոդված 7
Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի մեկնաբանման, կիրառման կամ կատարման առնչությամբ կամ դրանց արդյունքում ծագող ցանկացած վեճ, տարաձայնություն կամ պահանջ, այդ թվում՝ դրա առկայության, գործողության կամ դադարելու հետ կապված հարցերը, որոնք վաթսուն (60) օրվա ընթացքում չեն լուծվում բանակցությունների միջոցով կամ

կարգավորման այլ համաձայնեցված եղանակով, պետք է լուծվեն վերջնական և պարտադիր արբիտրաժի միջոցով՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ գործող՝ Արբիտրաժային մշտական դատարանի՝ Միջազգային կազմակերպությունների և պետությունների մասնակցությամբ արբիտրաժի կամընտիր կանոններին համապատասխան:

Արբիտրները պետք է լինեն երեքը (3):

Արբիտրաժային վարույթի ընթացքում կիրառվող լեզուն անգլերենն է:

Հոդված 8
Ուժի մեջ մտնելը և դադարելը

Բաժին 8.01 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի ավարտման մասին ծանուցման ստացումը ՀՇՄՖԿ կողմից Կառավարությանը հավաստելու օրը:

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի երկկողմ համաձայնության հիման վրա: Փոփոխություններն ու լրացումները կընդունվեն առանձին արձանագրություններով, որոնք կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն հոդվածով սահմանված ընթացակարգերի համաձայն:

Բաժին 8.02 Սույն Համաձայնագիրն անժամկետ է: Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Համաձայնագրի գործողությունը դադարում է այդպիսի ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից վեց (6) ամիս հետո՝ պայմանով, որ սույն Համաձայնագրի դրույթներն ուժի մեջ կմնան մինչև դադարեցման ուժի մեջ մտնելը դրա շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերի համար՝ մինչև այդ պայմանագրերով նախատեսված՝ վճարման ենթակա բոլոր գումարներն ամբողջությամբ վճարվեն:

Հոդված 9
Հաղորդակցության հասցեները

Կողմերը համաձայնության են գալիս, որ սույն Համաձայնագրի գործողության ընթացքում առաջացող ցանկացած հաղորդակցություն կարող է ուղարկվել ստորև նշված համապատասխան հասցեներով.

Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Մելիք-Ադամյան փողոց 1, Երևան, 0010.

ՀՇՄՖԿ համար՝ Ֆինլանդիա, Հելսինկի FI-00100, Ֆաբիանինկատու 34 (սուրհանդակային առաքման համար).
Ֆինլանդիա, Հելսինկի FI-00171, փոստարկղ 241 (սովորական փոստի համար):

Կատարված է երկու օրինակով, Երևանում, 2016 թվականի _____ _____ -ին, հայերենով և անգլերենով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ՝